

Այսպէս տեղի ունեցաւ յեղաշրջումը Վիշապին (Օձն ալ խառնուած) բարիէն դէպ ի չար. յեղաշրջում մը որ միայն կրօնական մարգերուն մէջ չմնաց այլ գեղարուեստի, մշակոյթի, արհեստի մէջ ալ ունեցաւ իր յեղաշրջական ընթացքը, միայն թէ տեղ տեղ աւելի կամ նուազ արագութեամբ կամ դանդաղութեամբ, աւելի կամ նուազ կատարելութեամբ կամ յաջողութեամբ, արհեստին ունեցած դիրքին համաձայն (յեղաշրջող կրօնքին հանդէպ), անոր ընթացքին համեմատ:

Ինչպէս ներկայիս անցեալին մէջ ալ կրօնքը նիւթացուած է, պարզ աչքով շօշափուելու, պատկերացուելու, տեսնուելու համար: Արհեստական եւ արուեստական բարձրագոյն ուժերը մարդկութեան շարքերէն յառաջացած են ձուլելու կերտելու համար կրօնքին նիւթական երեւոյթը, ներշնչուելով բարձրաթոյն հոգիէն: Սակի, արծաթ, զանազան մետաղներ, փայտ, քար, վերջապէս նիւթը, ամէն ատեն, ամէն տեղ օգտագործուած, ծառայեցուած է նիւթականացնելու համար կրօնքը իր ամէն կարելի կերպերով: Քրիստոնեան իրաչին մէջ տեսած է այն որ հեթանոսը կը տեսնէր Վիշապին, ցուլին կամ որեւէ ուրիշ պատկերացման մէջ: Նիւթացման մէջէն Հոգին կը պաշտէին: Եւ Վիշապ գաղափարն ալ պէտք էր նիւթանար, տեսնուէր: «Քրիստոսէ առաջ հինգերորդ եւ չորրորդ հազարամեակներուն, երբ աշխարհի քաղաքակրթութիւնը սահմանափակուած էր մեր ընդհանրապէս սերունդներուն մէջ, եւ ասոնց միջոցաւ կը տարածուէր Աղլան տեանէն մինչեւ խաղաղականը՝ Եւրոպայի ու Ասիոյ լայնածաւալ երկիրներուն մէջ, Անագապղնձի Շրջանին ծածկող այդ իսկապէս մեծ քաղաքակրթութեան բովանդակ ոլորտներուն մէջ, Օձը ու Վիշապը կը տիրապետէին գերիշխան: Նոյն իսկ այսօր մենք կարող ենք, հնագիտական հրաշալի յայտնութեանց շնորհիւ, մեր Մայրապաշտ եւ Արեւապաշտ ու Օձապաշտ նախնեաց գաղթաշարժերուն անկորուստ հոյակերտ հետքերը նշմարել

Մեծն Բրիտանիոյ կղզիներէն սկսեալ մինչեւ Հնդկաստան ու Չինաստան եւ կեղրոնական Ամերիկա: Բոլոր այս երկիրներու հին մեհեանները, որ նոր ի նորոյ յարուածին կ'առնեն իրենց բազմահազար տարիներու գերեզմաններէն, համակ թաթախուն են Արեւապաշտութեան, Մայրապաշտութեան եւ Օձապաշտութեան անթիւ անհամար պաշտամունքի առարկաներով:



Հայկական «Վիշապ» գորգ
Ժէ դարու

Ballard Collection - The Metropolitan
Museum of Art of New-York

Եւ չէ կարելի աւելի ցցուն եւ ստոյգ չափանիշ մը գտնել զանազան կրօններու ծագումը որոշելու համար, քան նկատել թէ Օձը կամ Վիշապը ինչ դիրք կը զբաւէ անոնց իւրաքանչիւրին մէջ: Որովհետեւ, ինչպէս ըսինք, Օձը իրրեւ թշնամի ու Չար ոյժի մը ներկայացուցիչը կը համարուի Արիական կամ Սեմական ծագում ունեցող կրօններու մէջ¹: Չկենանք յարգոյ հեղինակին քիչ մը խանդավառ տողերուն վրայ, որուն Օձապաշտութիւն

1. Լոյս, 1927, Թիւ 1, էջ 33-34. Մ. Մինասեան: